

Տ. ԵՍԱՅԻ ՎՐԴ. ԱՄԲԱՐՋԵԱՆ

1880 — 1953

Ս. Աթոռոյս Պատր. Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրութեանին 25 Օգոստոսին ղրկուած նամակ մը կը գուժէր մահը Ս. Աթոռոյս երէց Միաբաններէն Հոգ. Տ. Եսայի Վրդ. Ամբարջեանի, որ 1936էն ի վեր մեկնած էր Պարսկաստան:

Հոգեշնորհի հայրը ծնած էր 1880ին, Նոր Ջուղայի Հաճի-Ապատ գիւղը:

Ընդհանուր Պատերազմի շրջանին իր ծննդավայրին՝ Ս. Ամենափրկչի վանքի վարժարանին մէջ առեւն մը վարած է ներքին տեսչի եւ հսկիչի պաշտօն: Նոյն շրջանին այրիացած ըլլալով 1921 Մարտին ուղեւորած է Երուսաղէմ եւ ընդունուած Տնօրէն Ժողովոյ կողմէ՝ իրրեւ Ս. Աթոռոյս աշխատաւոր միաբան:

1925ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, Ամեն. Տ. Եղիշէ Դուրեան Արքեպս. Պատրիարքէն: Երկար առեւն վարած է Ս. Յարութեան ժամարարութեան պաշտօնը:

Հանգուցեալ հայրսուրբը իր պարտքը կատարելէ ետք Ս. Աթոռոյս նկատմամբ, գնաց իր ծննդավայրը եւ կ'ապրէր իր զուկին մօտ:

Տէրը թող լուսաւորէ եւ յաւիտենական հանգիստ պարգեւէ անոր հոգիին:

Տ. ՈՍԿԻ ՎՐԴ. ԹԷՐԶԵԱՆ

1913 — 1953

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը խորունկ վիշտով համակուած կը գուժէ իր անդամներէն Հոգ. Տ. Ոսկի Վրդ. Թէրզեանի դառն եւ անժամանակ մահը:

Հանգուցեալ Տ. Ոսկի Վրդ. ծնած է 1913ին ի Կ. Պոլիս: Նախակրթութիւնը ծննդավայրին ազգային եւ ֆրանսական վարժարանի մը մէջ աւարտելէ ետք, 1930ին ընդունուած է Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը:

Երուսաղէմի մէջ Ժառանգաւորաց Վարժարանի քառամեայ շրջանը յաջողութեամբ աւարտելէ ետք 1934ին կը ձեռնադրուի Սարկաւազ իսկ 1936ին կուսակրօն քահանայ՝ Երանաշնորհ Տ. Թորգոմ Պատրիարքէն: Քանի մը տարի վանուցս մէջ պաշտօնավարելէ ետք կը մեկնի իր ծննդավայրը ուր կը մնար ցարդ:

Ս. Աթոռոյս մէջ իր ծառայութեան շրջանը եղած է արդիւնաւոր եւ Միաբանութիւնն ու Ազգը ուզած է տեսնել իր մէջ ապագայ արժէքաւոր եկեղեցականը: Պոլիս՝ ղօթախոս հանգուցեալը շրջանակի, պայմաններու եւ անմեկնելի մնացած հոգեկան ալեկոծումներու հետեւանքով կորսնցուց իր առողջութիւնը որուն հետեւանքով նաեւ ապարէզին մէջ ծառայելու եւ օգտակար դառնալու իր օւժերը:

Կ'աղօթենք որ Տէրը նոր հովիւներ յարուցանէ բազմակարօտ մեր ժողովուրդին եւ Հանգուցեալ հայրսուրբին յոգնատանջ հոգին պայծառացնէ իր յաւիտենական արքայութեան մէջ: